ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԿՐՏՉՅԱՆ ԿԱՐԵՆ ԳՈՒՐԳԵՆԻ

ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1991-2005 ԹԹ.

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ-2014

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Մինասյան Է.Գ.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Բայբուրդյան Վ.Ա.

պատմական գիտությունների թեկնածու,
դոցենտ Իսկանդարյան Գ.Մ.

Առաջատար կազմակերպություն՝ Խ. Աբովյանի անվան հայկական
պետական մանկավարժական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014 թ. հուլիսի 4-ին, ժամը 14^{00}-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է հունիսի 3-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Մուրադյան Հ. Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

<u>ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:</u> Պատմության նորագույն շրջանում Իրանի Իսլամական Հանրապետությունը Հայաստանի Հանրապետության համար արտաքին աշխարհ դուրս գալու իրական և բացառիկ հնարավորություն է: Թեմայի ուսումնասիրման կարևորությունը պայմանավորված է Հայաստանի երրորդ Հանրապետության արտաքին քաղաքականության, մասնավորապես սահմանակից հարևան Իրանի Իսլամական Հանրապետության հետ միջպետական հարաբերությունների հաստատման և զարգացման իրողությամբ, որը տարածաշրջանում ունի կայունության և անվտանգության դրական, առաջադիմական նշանակություն: ԻԻՀ-ը տարածքով և բնակչության թվաքանակով ՀՀ-ի և ԼՂՀ-ի ամենամեծ հարևանն է, իսկ վերջիններս՝ նրան սահմանակից ամենափոքր քրիստոնյա պետությունները:

Ատենախոսության արդիականությունը պայմանավորված է նրանով, որ հետազոտության մեջ քննարկվում և համակողմանի արժևորվում է ՀՀ-ԻԻՀ հարաբերությունների հիմնահարցերի մի խումբ, որը դեռևս տեղ չի գտել համապատասխան գրականության էջերում: ՀՀ-ին և ԻԻՀ-ին միավորում է պանթյուրքիզմի գաղափարախոսության վտանգը: «Մեծ Թուրան» ստեղծելու վերաբերյալ թուրքական նկրտումներին հակակշռում է ՀՀ-ԻԻՀ բնական դաշինքը:

Հետխորհրդային տարիներին և այսօր ՀՀ-ում կարևորվում են կապերը հարավային հարևան ԻԻՀ-ի հետ, քանզի ՀՀ պետական-դիվանագիտական գործիչների գնահատմամբ այն ընկալվում ու գնահատվում է որպես տարածաշրջանում ուժերի հավասարակշռությունը պահպանող և մեծ կշիռ ու դեր ունեցող պետություն, որի հետ հաշվի են նստում նաև արտատարածաշրջանային ուժերը:

<u>ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ:</u> Տվյալ ատենախոսությունը լուսաբանում է հետխորհրդային տարիներին ԻԻՀ-ի արտաքին քաղաքականության առանձնահատկությունները և ներգրավվածությունը տարածաշրջանում, ԻԻՀ-ՀՀ միջպետական քաղաքական ու տնտեսական կապերը, ինչպես նաև Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում ԻԻՀ-ի դիրքորոշումը: Հետազոտության թեման ընտրելուց հաշվի է առնվել նորանկախ ՀՀ-ի հարևան ԻԻՀ-ի դերը նոր աշխարհակարգում և միջազգային ատյաններում, Ղարաբաղյան ազատագրական պատերազմի տարիներին ԻԻՀ-ի միջնորդական առաքելությունն ու տնտեսական համագործակցությունը ՀՀ-ի հետ՝ իրանական սննդամթերքի և նավթամթերքի մատակարարումը ՀՀ-ին, ադրբեջանա-թուրքական շրջափակման ծանր հետևանքերի մեղմացումը, սահմանային առևտուրը, էներգետիկ ռեսուրսների մատակարարումն ու այլ հանգամանքներ: Իր նպատակին հասնելու համար հեղինակը պարզել է հետևյալ խնդիրները.

1. ԻԻՀ-ի արտաքին քաղաքականության գաղափարախոսության հիմքը
2. ՀՀ-ԻԻՀ հարաբերությունները՝ վերլուծելով ըստ փուլերի
3. ՀՀ-ի դերը ԻԻՀ-ի աշխարհաքաղաքական շահերի համակարգում և հակառակը

4. ՀՀ-ի հետ հարաբերությունների համատեքստում ԻԻՀ-ի հարաբերությունները հարևան պետությունների հետ՝ լուսաբանելով տարածաշրջանային քաղաքական զարգացումները
5. Գիտակրթական և մշակութային կամ միջքաղաքակրթական հարաբերությունները:
6. Իրանահայերի որպես կապող օղակի դեր ՀՀ-ԻԻՀ հարաբերություններում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ: Ատենախոսության մեթոդաբանական հիմքերը ԻԻՀ-ի և ՀՀ-ի կառավարությունների վարած քաղաքականության, դրա նախադրյալների, կարևոր գործոնների, բազմաբնույթ հարցադրումների ու տեսակետների քննական մեկնաբանությունն է ու փաստերի համեմատական-համադրական վերլուծությունը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ: Ատենախոսությունը ընդգրկում է 1991 թ. մինչև 2005 թ. ժամանակահատվածը: Ուսումնասիրվող ժամանակագրական սահմանների ընտրությունը պայմանավորված է ԽՍՀՄ-ի փլուզմամբ, ՀՀ-ի անկախացմամբ և ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու հնարավորությամբ, որի հետևանքով հաստատվեցին ՀՀ-ԻԻՀ դիվանագիտական հարաբերությունները: 1990-ական թթ. վերջերին, երբ ԱՄՆ-ի կողմից առաջ քաշվեց Փոլ Գոբլի ծրագիրը, որը ենթադրում էր Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև տարածքների փոխանակում՝ Մեղրիի փոխարեն ԼՂ-ն ՀՀ-ին հանձնելու տարբերակը, որը մերժվեց ՀՀ-ի կողմից: ԻԻՀ-ն ևս բացասաբար վերաբերվեց այդ ծրագրին իր հյուսիսարևմտյան սահմանի հնարավոր փոփոխման համար: Այդ է պատճառը, որ 2000-2005 թթ. իրանական կողմը շտապ կարգով սկսեց աշխուժացնել տնտեսական համագործակցությունը ՀՀ-ի հետ, հանդես եկավ արդեն վաղուց կնքված պայմանագրերն իրականություն դարձնելու մի շարք ծրագրով:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ: Ատենախոսության գիտական նորույթն այն է, որ առաջին անգամ արխիվային փաստաթղթերի հիման վրա ուսումնասիրվում են ՀՀ-ԻԻՀ հարաբերությունները: Դեռևս չկա ծավալուն, համակարգող գիտական աշխատանք, որն ուսումնասիրեր հայ-իրանական քաղաքական-դիվանագիտական, տնտեսական և գիտակրթական ու մշակութային հարաբերությունները ՀՀ-ի և ԻԻՀ-ի երկկողմ շահերի համատեքստում: Միաժամանակ հետազոտությունը չի հավակնում ամբողջական պատասխաններ տալ քննարկվող թեմային առնչվող բոլոր հարցերին:

Ատենախոսությունը որպես գիտական նորույթ կարևորվում է հետևյալ առումներով. փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզվել է. 1. ԼՂ-ի հակամարտության խաղաղ կարգավորման ԻԻՀ-ի միջնորդական առաքելությունը մշակվել է Սիրիայում: 2. Ի սկզբանե Թեհրանը ԼՂ-ի հակամարտությանը դիտարկել է որպես ոչ կրոնական խնդիր: Սակայն միաժամանակ զերծ չի մնացել որոշ իսլամական երկրների՝ ՀՀ-ի և ԼՂՀ-ի դեմ ուղղորդելուց: 3. ՀՀ-ԻԻՀ հարաբերություններում պարբերաբար նկատվել են ելևէջումներ: 4. Վերհաստատվել է, որ ԻԻՀ-ի միջնորդական առաքելությունը ձախողվել է ՌԴ-ի, ԵԱՀԿ Մինսկի խմբի, Թուրքիայի ոչ իրանանպաստ քայլերով: 5. Փաստվել է, որ Թեհրանը ուշադրություն չի դարձրել հայկական կողմի նախազգուշացումներին՝ բանակցություններում ԼՂ-ի ներկայացուցչի

մասնակցությունն ապահովելու համար: 6. Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվում է, որ 1992 թ. հոկտեմբերի 26-ին ԻԻՀ-ի նախագահ Հ. Ռաֆսանջանին գումարել է խորհրդակցություն և հայտարարել, որ բացի զենքի արգելքից ոչ մի խոչընդոտ չպետք է լինի կամուրջով ՀՀ-ի հետ առևտրում: Սույն որոշմամբ փաստորեն մասամբ լուծվում էր ՀՀ-ին պարենի և վառելիքի մատակարարման ռազմավարական հարցը:

<u>ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:</u> Ատենախոսության առաջ քաշված դրույթները, մեկնաբանություններն ու եզրահանգումները կարող են օգտակար լինել հայոց պատմության նորագույն շրջանի՝ Հայաստանի երրորդ Հանրապետության արտաքին քաղաքականության գնահատման, ինչպես նաև ՀՀ-ին հարակից պետությունների հետ ԻԻՀ-ի վարած քաղաքականության լուսաբան-ման համար: Աշխատության դրույթները կարող են օգտակար լինել նաև Իրանի նորագույն պատմությանը վերաբերող դասընթացներում և ուսումնասիրություններում, ՀՀ ազգային շահերի շրջանակներում ԻԻՀ-ի դիրքորոշումը ներկայացնելիս:

<u>ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ:</u> Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ Պատմության ֆակուլտետի Հայոց պատմության ամբիոնում: Ուսումնասիրության հիմնական դրույթները լուսաբանվել են հեղինակի հրատարակած ութ հոդվածներում:

<u>ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ (ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ</u>): Հետազոտության շարադրման համար օգտվել ենք հայերեն, ռուսերեն, անգլերեն և պարսկերեն տարբեր աղբյուրներից ու աշխատություններից: Արխիվային բազմաթիվ փաստաթղթերի հիման վրա առաջին անգամ ներկայացվում է 1990-ական թթ. ՀՀ-ԻԻՀ հարաբերությունների հաստատումը, դրա նախադրյալներն ու պատճառները, այդ հարաբերությունների զարգացումն ու խորացումը, դրանցում տեղ գտած բացթողումները, թերացումներն ու խնդիրները: Ատենախոսության մեջ օգտագործված սկզբնաղբյուրները բաժանվում են ա. արխիվային փաստաթղթերի, բ. հրատարակված սկզբնաղբյուրների, գ. ՀՀ-ում և ԻԻՀ-ում լույս տեսած պարբերական մամուլից քաղված նյութերի, որոնց մեծ մասը գիտական շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ:

Ատենախոսության աղբյուրագիտական հենքն են Հայաստանի ազգային արխիվի և ՀՀ ԱԳՆ-ի պատմադիվանագիտական արխիվի փաստաթղթերը:

Հայաստանի ազգային արխիվի ՀՀ Արտաքին գործերի նախարարության Մերձավոր և Միջին Արևելքի վարչության Իրանի բաժնի արխիվային փաստաթղթերն ու մամուլի հրապարակումները ընդգրկում են 1991-1994 թթ.[1]: Այս փաստաթղթերը կարևոր են լուսաբանելու ՀՀ-ի և ԻԻՀ-ի միջև հաստատված դիվանագիտական հարաբերությունները[2], այդ գործում իրանահայ գործիչների ունեցած դերը, հայրենիքին իրանահայ աշխարհիկ և հոգևոր կառույցների տրամադրած օգնությունը, ԼՂ-ի հակամարտության հարցում ԻԻՀ-ի միջնորդական առաքելությունը, ԻԻՀ-ի հասարակական-քաղաքական

---

[1] ՀԱԱ, Ֆ. 326, ց. 9, գ. 25, գ. 26, գ. 32, գ. 45, գ. 51, գ. 56, գ. 146, գ. 169, գ. 170, գ. 172, գ. 174, գ. 175, գ. 179, գ. 181, գ. 184):

[2] Նույն տեղում, գ. 196, գ. 103, գ. 168:

վերաբերմունքը, պատերազմի տարիներին ԻԻՀ-ից պարենամթերքի և վառելանյութի տեղափոխումը ՀՀ[1] և այլ հարցեր[2]:

Դիվանագիտական հարաբերությունների լուսաբանման համար խիստ կարևոր են ԻԻՀ-ում ՀՀ առաջին դեսպան Վ. Բայբուրդյանի հաշվետվությունները, տեղեկանքները[3]:

1994-2005 թթ. իրադարձությունների քննական վերլուծությունը կատարված է ՀՀ ԱԳՆ պատմա-դիվանագիտական արխիվի համապատասխան փաստաթղթերի հիման վրա[4]: Այդ փաստաթղթերում հանգամանալից ու հավաստի տեղեկություններ են պարունակում ՀՀ-ԻԻՀ երկկողմ հարաբերություններում նկատված որոշ խնդիրների, ՀՀ-ի և ԻԻՀ-ի պաշտոնյաների, ՀՀ-ի, ԻԻՀ-ի և օտարերկրյա այլ դեսպանների հանդիպումների և զրույցների, նրանց հայտարարությունների, ԼՂ-ի հակամարտության կարգավորման գործընթացում ԻԻՀ-ի միջնորդական առաքելության և հասարակական վերաբերմունքի[5], 1990-ական թթ. 2-րդ կեսին ԻԻՀ-ի տարածաշրջանային քաղաքականության՝ տնտեսական բազմակողմ համագործակցության ձևավորման[6] և այլ հարցերի մասին:

Թեմայի բազմակողմանի քննարկման համար կարևոր են ՀՀ ԱԳ նախարարների[7], ՀՀ դեսպան Վ. Բայբուդյանի, ՀՀ դեսպանության քարտուղարների օրագրերում կատարված գրառումները[8]:

Արխիվային նյութերը տեղեկություններ են տալիս Իրան-Հայաստան գազամուղ անցկացնելու ծրագրի, Ադրբեջան-Նախիջևան նոր ճանապարհի, «Ասիայե Միյանե» տնտեսական շաբաթաթերթի նյութերի[9], ցուցահանդեսների կազմակերպման, ՀՀ նախագահի հրաժարականից հետո (03.02.1998) ստեղծված ներքաղաքական իրավիճակի և ԻԻՀ-ում դրա արձագանքների վերաբերյալ[10]:

Թեմայի ուսումնասիրման համար կարևոր են եղել որոշ տպագիր փաստաթղթեր[11] և հրապարակումներ[12]: Արժեքավոր սկզբնաղբյուր են նաև իրադարձություններին անմիջական մասնակիցների և ականատեսների հուշերը:

---

[1] Նույն տեղում, գ. 94, գ. 178, գ. 27:
[2] Նույն տեղում, գ. 176:
[3] Նույն տեղում, գ. 173:
[4] ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ (Այսուհետ՝ ՊԴԱ), g. 1, գ. 283, գ. 284, g. 2, գ. 167, գ. 168, գ. 169, g. 5, գ. 67:
[5] Նույն տեղում, g. 1, գ. 285:
[6] Նույն տեղում, g. 1, գ. 286:
[7] ՀԱԱ, Ֆ. 326, g. 9, գ. 84:
[8] ՀՀ ԱԳՆ ՊԴԱ, g. 2, գ. 242:
[9] Նույն տեղում, g. 5, գ. 239:
[10] Նույն տեղում, գ. 158:
[11] «Բանբեր Հայաստանի արխիվների», N-1(100), Եր., 2005: Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու 1991-1995 թթ., N-1(1), Եր., 2002: Իրանի Իսլամական Հանրապետության Սահմանադրություն: (Հիմնական օրենք) թարգմանիչ՝ Գ. Բաղալյան, Թեհրան, 2005:
[12] Իրանի Իսլամական հեղափոխության առաջնորդ էմամ Խոմեյնու քաղաքական-հոգևոր կտակը, նվիրված՝ Առաջնորդի երկրային մահվան 18-րդ տարելիցին, ԻԻՀ դեսպանության մշակույթի կենտրոն, հունիս 2007, թարգմանիչ՝ Ժ. Աբրահամյան: Երևանի Կենտրոնական (Կապույտ) մզկիթ, Եր., 2004: Միրզախանյան Հ., Իրանահայ համայնքի իրողությունները Լևոն Ահարոնյանի «փոթորկի» մեջ, Թեհրան, 2010:

ՀՀ առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի ելույթների, հարցազրույցների «Ընտրանի»-ում տեղեկություններ կան նաև ԻԻՀ-ՀՀ հարաբերությունների վերաբերյալ[1]: ՀՀ նախկին ԱԳ փոխնախարար Ա. Նավասարդյանն իր հուշերում[2] անդրադարձել է 1992 թ. մարտի 15-17-ը ԻԻՀ-ի միջնորդությամբ հայ-ադրբեջանական բանակցություններին: ՀՀ նախկին ԱԳ նախարար Վ. Օսկանյանի «Անավարտ տասնամյակ»[3] գիրքը իր պաշտոնավարման տարիների ելույթների ընտրանին է, որը ներառում է մոտ հարյուր ելույթներ: Որոշ ելույթներ վերաբերում են ՀՀ-ԻԻՀ հարաբերություններին: Վ. Օսկանյանն իր հուշերում[4] ՀՀ-ԻԻՀ հարաբերությունների համատեքստում անդրադարձել է նաև ՀՀ-Իսրայել, ՀՀ-ԱՄՆ, ԱՄՆ-ԻԻՀ հարաբերություններին:

Իրանահայ հայտնի գործարար և բարերար Լ. Ահարոնյանն իր հուշերում[5] անդրադարձել է նաև 1990-ական թթ. ՀՀ-ԻԻՀ նորաստեղծ հարաբերություններին և այդ գործում նաև իր մասնակցությանը:

Թեմայի վերաբերյալ հետազոտությունները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խմբի ուսումնասիրությունները վերաբերում են ՀՀ-ԻԻՀ հարաբերություններին, իսկ երկրորդը՝ միջազգային հարաբերություններին և այդ համատեքստում որոշ նյութեր վերաբերում են խնդրո առարկային:

Հիմնախնդրի լուսաբանման համար արժեքավոր են ԻԻՀ-ում ՀՀ առաջին դեսպան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Բայբուրդյանի աշխատությունները[6]: «Իրանի պատմություն» աշխատությունը մեզ համար հատկապես կարևոր է Իրանի նորագույն շրջանի պատմության՝ Իսլամական հեղափոխությունից հետո երկրի արտաքին քաղաքականության, հետխոմեյնիական ներքաղաքական կյանքի և այլ հարցերի լուսաբանման համար: «Իրանն այսօր» տեղեկատուն բազմակողմանի տեղեկություններ է տրամադրում Իրանի պատմության, մշակույթի, տնտեսության, պետական կառույցների, ազգային կազմի, լեզուների, կրոնների և այլնի մասին: Հատուկ տեղ է տրված 1990-ական թթ. հայ-իրանական հարաբերություններին: «Իրանի հայ համայնքը» աշխատության մեջ համակողմանի քննության է ենթարկվում Մերձավոր և Միջին Արևելքի ամենահնագույն՝ Իրանի հայ համայնքի արդի հիմնախնդիրները, հայկական համայնքի հոգևոր և աշխարհիկ կառույցների, համայնքի և ՀՀ-ի միջև կապերի հիմնահարցերը:

ԻԻՀ-ի արտաքին քաղաքականությունը լուսաբանելու համար օգտվել ենք Վ. Բայբուրդյանի «Իսլամը և նրա գաղափարական-քաղաքական դրսևորումները մահմեդական պետությունների քաղաքականության մեջ և միջազգային

---

[1] Տեր-Պետրոսյան Լ., Ընտրանի: Ելույթներ, հոդվածներ, հարցազրույցներ, Կազմ., խմբ., առաջաբ. և վերջաբ. հեղ.՝ Ա. Բ. Սարգսյան, Եր., 2006:

[2] Նավասարդյան Ա., Դիվանագիտություն, Եր., 2010:

[3] Օսկանյան Վ., Անավարտ տասնամյակ, ելույթների ընտրանի, Եր., 2009:

[4] Օսկանյան Վ., Անկախության ճանապարհով. փոքր երկրի մեծ մարտահրավերները, Եր., 2013:

[5] Ահարոնյան Լ., Փոթորկոտ կեանքիս օրերը, Թեհրան, 2010:

[6] Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն, Եր., 2005: Նույնի՝ Իրանն այսօր (տեղեկատու), Եր., 1999: Նույնի՝ Իրանի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Եր., 2013:

հարաբերություններում» հոդվածից[1], որտեղ վերլուծվում է իսլամի նշանակությունը ԻԻՀ-ի քաղաքականության մեջ:

Վ. Բայբուրդյանի՝ ՀՀ-ԻԻՀ հարաբերություններին վերաբերող հոդվածներում[2] ներկայացված են ԽՍՀՄ փլուզման հետևանքով Այսրկովկասում ԻԻՀ-ի առաջացած շահերը ինչպես քաղաքական, պետական անվտանգության, այնպես էլ տնտեսական ոլորտներում: ՀՀ հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումից հետո ԻԻՀ-ն հատուկ կարևորություն է տվել նորանկախ երկրի հետ կապերին: Քննարկվում է այն հարցը, որ Թեհրանը ընդունում է, որ ՀՀ-ն կարող է կանգնեցնել թուրքական ազգայնականությունը՝ պանթուրքիզմը: Հոդվածում հատուկ ընդգծված է այն միտքը, որ ԻԻՀ-ը տարածաշրջանի կայունության և անվտանգության կարևոր գործոն է:

Վ. Բայբուրդյանի «Իրան-Ադրբեջան հարևաննե՞ր, թե՞ աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական ախոյաններ» հոդվածում քննարկվում են տարածաշրջանային բնույթի հարցեր, որոնք առնչվում են նաև ՀՀ-ին և ԼՂՀ-ին[3]: Այս հոդվածում վերլուծվում է ԽՍՀՄ փլուզման հետևանքով ԻԻՀ-ի և Թուրքիայի շահերի բախումը: Քննվում են ԻԻՀ-ԱՀ հարաբերությունները՝ տարածաշրջանում միջազգային հարաբերությունների համատեքստում և որոշակի տեղ հատկացվում ԼՂ-ի գործոնին:

ՀՀ-ԻԻՀ քսանամյա հարաբերությունների պատմությանն է անդրադարձել ԻԻՀ-ում ՀՀ դեսպանության արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար Գ. Բադալյանը[4]: Նրա գրքում առանձին բաժիններով համառոտ ներկայացված են Իրանի պատմությունը, ՀՀ-ԻԻՀ հարաբերությունները, ՀՀ-ի և ԻԻՀ-ի միջև 20 տարիների ընթացքում ստորագրված փաստաթղթերի և պայմանագրերի ցանկը, 1992-2012 թթ. հարաբերությունների տարեգրությունը, ինչպես նաև լուսանկարների շարքը:

Գնահատելով նշանավոր իրանագետ Վ. Բայբուրդյանի և ԻԻՀ-ում ՀՀ դեսպանության արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար Գ. Բադալյանի հրապարակումների և հոդվածների արժեքավոր կողմերը՝ պետք է միաժամանակ նշել, որ դրանցում շեշտը դրված է պաշտոնական հարաբերությունների զարգացման և դրական նշանակություն ունեցող իրադարձությունների վրա: Սույն ատենախոսության մեջ առաջին անգամ

---

[1] Բայբուրդյան Վ., Իսլամը և նրա գաղափարական-քաղաքական դրսևորումները մահմեդական պետությունների քաղաքականության մեջ և միջազգային հարաբերություններում, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXV, Եր. 2006, էջ 26-54:

[2] Բայբուրդյան Վ., Հայաստանի Հանրապետության տեղը և դերը Իրանի Իսլամական Հանրապետության տարածաշրջանային քաղաքականության ոլորտում, «Պատմություն» հանդես, Եր., 2002, N-1, էջ 34-44, Նույն հոդվածը տե՛ս «Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները» զեկուցումների ժողովածու, Եր., 2004, էջ 143-148: Նույնի՝ Հայ-իրանական հարաբերությունները Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XVII, Եր., 1998, էջ 5-20: Նույնի՝ Հայ-իրանական հարաբերությունները 1991-1998 թթ.. հայացք երկու տասնամյակ հեռավորությունից, Հայաստան-Իրան. 20 տարի համագործակցության ճանապարհով, միջազգային գիտաժողովի նյութեր, 2012 թ., Եր., 2012, էջ 15-54:

[3] Բայբուրդյան Վ., Իրան-Ադրբեջան հարևաննե՞ր, թե՞ աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական ախոյաններ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հտ. XXIII, Եր., 2003, էջ 7-35:

[4] Բադալյան Գ., Հայաստան-Իրան. հարաբերությունները 20 տարեկան են, Թեհրան, 2012:

դրական նշանակություն ունեցող երևույթներին զուգահեռ քննարկվում են նաև բացասական միտումներ պարունակող հարցեր՝ նպատակ ունենալով լուսաբանել և լրացնել բացթողումները:

ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը և հարևան երկրների ՀՀ-ի հետ հարաբերությունները ներկայացնելիս օգտվել ենք պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Է. Մինասյանի աշխատություններից և հոդվածից, որոնցում հանգամանորեն քննարկված են Հայաստանի երրորդ Հանրապետության ներքին և արտաքին քաղաքական և տնտեսական համակարգերի բոլոր ոլորտները[1]:

ՀՀ-ի աշխարհաքաղաքական կարգավիճակը ներկայացնելիս՝ օգտվել ենք պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանի, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ. Շիրինյանի, պատմական գիտությունների թեկնածուներ Հ. Չաքրյանի, Գ. Արշակյանի, Ժ. Մանուկյանի, Ս. Մելիքյանի, ինչպես նաև օտարազգի հեղինակների աշխատություններից և հոդվածներից[2]: ԼՂ-ի հակամարտության հարցում ԻԻՀ-ի միջնորդական առաքելության և հետպատերազմյան տարիներին իրանական արձագանքների մասին որոշ անդրադարձեր կան պատմական գիտությունների թեկնածուներ Տ. Բալայանի և Ա. Փաշայանի, ՀՀ-ում ՌԴ նախկին դեսպան Վլ. Ստուպիշինի, պատմական գիտությունների դոկտորներ Գ. Խուդինյանի և Հ. Դեմոյանի աշխատություններում և հոդվածներում[3]:

---

[1] Մինասյան Է., Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում 1990-2003 թթ., Եր., 2003: Նույնի՝ Հայաստանի Երրորդ Հանրապետության պատմություն, Եր., 2013: Նույնի՝ ՀՀ սեփականաշնորհման քաղաքականությունը տնտեսության ոլորտում 1991-2005 թթ., Մեսրոպ Մաշտոց համալսարան, Լրատու 2, գիտական հոդվածների ժողովածու, Ստեփանակերտ, 2007, էջ 12-23:

[2] Հովհաննիսյան Ն., Մերձավորարևելյան-անդրկովկասյան աշխարհաքաղաքական տարածաշրջանի ձևավորումը, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XX, Եր., 2001, էջ 82-103: Նույնի՝ Հայաստանը անդրկովկասյան-մերձավորարևելյան աշխարհաքաղաքական տարածաշրջանի գործոն, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XVIII, Եր., 1999, էջ 16-37: Նույնի՝ Իրանը մերձավորարևելյան տարածաշրջանի համակարգում, «Իրան-նամե», Ա տարի, թիվ 4, 1993 սեպտեմբեր, էջ 4-6: Նույնի՝ Այաթոլլահ Խոմեյնիի մոտեցումը Խորհրդային Միության հետ հարաբերությունները կարգավորելու հարցում և դիրքորոշումը Հայաստանի ու հայության հանդեպ, Հայաստան-Իրան. 20 տարի համագործակցության ճանապարհով, միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., 2012, էջ 55-77: Hovhannisyan N., The Karabakh problem, (The Thorny road to freedom and independence), Yerevan 2004: Նույնի The Foreign policy of Armenia, Yerevan, 1998. Շիրինյան Լ., Նոր աշխարհակարգը և Հայաստանը, Եր., 2006, Չաքրյան Հ., Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, Եր., 1998: Արշակյան Գ., Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում 1991-2001 թթ.,Եր., 2009: Մանուկյան Ժ., ՀՀ-ՎՈՒԱՄ փոխհարաբերությունները և Հարավային Կովկասի անվտանգության խնդիրները 1997-2006 թթ., Մ. Մաշտոց համալսարան, Լրատու, գիտ. հոդվ. ժող., Ստեփանակերտ, 2008, էջ 25-33: Մելիքյան Ս., ՀՀ-ԱՄՆ հարաբերությունները 1991-2000 թթ., Եր., 2010: Гаджиев К. С., Геополитика Кавказа, М., 2001. Бжезинский З., Великая шахматная доска, М., 1999.

[3] Բալայան Տ., Ղարաբաղյան հիմնահարցը և միջազգային դիվանագիտությունը 1991-1994 թթ., Եր., 2004: Փաշայան Ա., Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը. նպատակները, գործունեությունը, դիրքորոշումը Ղարաբաղյան հակամարտության նկատմամբ, Եր., 2003: Ступишин Вл., Карабахский конфликт 1992-1994, М., 1998. Демоян Г., Турция и Карабахский конфликт в конце XX-начала XXI веков, Ер., 2006.

Նախիջևանի հատվածում թուրք-իրանական սահմանային փոփոխությունների համատեքստում ՀՀ-ԻԻՀ սահմանի ձևավորմանն են անդրադարձել ակադեմիկոս Հ. Սիմոնյանը[1] և Միջին Արևելքի հարցերով փորձագետ Է. Բեգիջանյանը[2]: Վերջինս անդրադարձել է նաև Թեհրան-Բաքու և Թեհրան-Երևան հարաբերություններին:

ԻԻՀ-ի արտաքին քաղաքականությանն են անդրադարձել մի շարք հեղինակներ[3]: Իրանցի հեղինակները անդրադառնում են ԻԻՀ-ԱՄՆ քաղաքական գործընթացներին և համեստ տեղ հատկացնում հարևան երկրների հետ հարաբերությունների լուսաբանմանը: Դրանով հանդերձ, որոշ փորձագետներ քննարկել են տարածաշրջանային հարցեր Իսլամական հեղափոխության համատեքստում[4]: ԻԻՀ-ի ԱԳՆ-ի քաղաքական և միջազգային ուսումնասիրությունների գրասենյակի Կենտրոնական Ասիայի և Կովկասի կենտրոնի ղեկավար Մ. Մորադին իր հոդվածում քննարկում է Այսրկովկասում և հատկապես ՀՀ-ում ՆԱՏՕ-ի դիրքերի ամրապնդման քաղաքականությունը: Սակայն նա գերագնահատում է ՀՀ-ՆԱՏՕ համագործակցությունը[5]: Ատենախոսությունը շարադրելիս օգտվել ենք նաև մի շարք այլ հեղինակների

Դեմոյան Հ., Ղարաբաղյան հակամարտությունը և թյուրքական գործոնը, Եր., 2002: Абасов А., Хачатрян А., Варианты решения Карабахского конфликта: идеи и реалность, Издание второе исправленное и допелненное, М., 2004. Խուդինեան Գ., Ղարաբաղեան հիմնահարց. կարգաւորման պատրանքներն ու սառեցման հնարաւորութիւնները, «Դրօշակ», թիւ 3, յունիս 2001, էջ 138-160:

[1] Սիմոնյան Հր., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Եր., 1991:

[2] Բեգիջանյան է., Նախիջևանը և թուրք-իրանական հարաբերությունները, Տասնամյա հանրամագումար. Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն, Եր., 2004, էջ 206-232: Նույնի՝ Իրանա-ադրբեջանական փոխհարաբերությունների հարցի շուրջ, Եր., 2001: Նույնի՝ Իրանի աշխարհաքաղաքական դիրքը և Հայաստանը, Եր., 1995: Նույնի՝ Իրաքյան իրադարձությունների ու զարգացումների վերլուծություններ (1994-2004), Եր., 2004:

[3] Ушаков В., Амбициозные планы Тегерана, Азия и Африка, М., 1999, N 1 (498), стр.18-22. Мамедова Р., Формирование международно-прававой статус Каспийского моря в постсоветский период, "Центральная Азия и Кавказ" Швеция, N2 (14), 2001, с. 84. Гушер А., Исламское государство и теории и на практике, Азия и Африка, М., 1999, N2 (499), стр. 20-31. Али-Реза Бигдели, Обзор отношений между Исламской Республикой Иран и Республикой Азербайджан, Аму-Дарья, иранская журнал по изучению Центральной Азии и Кавказа, Тегеран, 1999 г., N 2, стр 17-25. Kramer Heinz, Will Central Asia Become Turkey's Sphere of influence.-Perceptions: Journal of International Affairs, March-May, 1996, pp. 1-7.

[4] Amirahmadi H., The Caspian region at Acrossroadi Challenges of a new frontier of Energy and Development, 2000. Ezzatollah Ezzaty, Iranian Geopolitics and its Effects on the Persian Gulf Security, The Iranian Journal of International Affairs, Vol. X, No. 1 & 2, Spring/Summer 1998, p. 123-124. Քազեմ Սաջադփուր Ս. Մ., ԻԻՀ-ի արտաքին քաղաքականությունը, Անցած 25 տարիների ուսումնասիրությունների, տեսակետների և քննարկումների վերլուծությունը, Իսլամական հեղափոխությունը և ապագայի հեռանկարները, (հոդվածների ժողովածու), էջ 145-146, Եր., 2010: Բասիրի Մ. Ա., Իսլամական հեղափոխության արձագանքները աշխարհում, Իսլամական հեղափոխությունը և ապագայի հեռանկարները, (հոդվածների ժողովածու), Եր., 2010, էջ 251-252:

[5] Manuchehr Moradi, Hozure NATO dar Ghafghaze janubi. Abad, mahdudiyathaye va payamdaha, Central Asia and The Caucasus Review, N-59, Tehran, 2007, pp. 7-26.

աշխատություններից[1], հոդվածներից[2] և հանրագիտարաններից[3], որոնք հնարավորություն են տալիս լույս սփռել հետազոտվող հիմնախնդրի տարբեր կողմերի վրա:

Երկկողմ հարաբերությունների վերաբերյալ նյութեր կան նաև ՀՀ-ում՝ («Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթ, «Ազգ» օրաթերթ) և ԻԻՀ-ում՝ լույս տեսնող («Ջոմհուրիէ էսլամի» պաշտոնաթերթ, «Ջահանէ էսլամ», «Սալամ», «Էթթելաաթ», «Քեյհան», «Ռեսալաթ» օրաթերթ) պարբերական մամուլում: Կարևոր է նաև 1931-ից Իրանում լույս տեսնող հայկական միակ «Ալիք» օրաթերթը: Վերջինիս ուշադրությունից չեն վրիպել ՀՀ-ԻԻՀ հարաբերությունները և նրանում տեղ են գտել արժեքավոր հրապարակումներ: Թեմայի վերաբերյալ հրապարակումներ կան նաև Թեհրանում լույս տեսնող երկլեզու՝ հայերեն և պարսկերեն «Լոյս» և «Ապագա» երկշաբաթաթերթերում, «Արաքս» ամսագրում, համացանցային որոշ կայքերում[4] և ամսագրերում[5]:

<u>ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ:</u> Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որոնք իրենց հերթին բաժանվում են 9 ենթագլուխների, եզրակացությունից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից, հավելվածից:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՆ մեջ հիմնավորվում են թեմայի արդիականությունը և գիտական նորույթը, ներկայացվում են հիմնական նպատակներն ու խնդիրները և թեմայի ժամանակագրական սահմանների ընտրությունը, տրվում է օգտագործված սկզբանաղբյուրների և գրականության համառոտ տեսությունը:

Առաջին գլուխը՝ «ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ», բաժանվում է չորս ենթագլխի:

Առաջին ենթագլխում, որը վերնագրված է ***«ՀՀ-ԻԻՀ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը»,*** համառոտ ներկայացվում է ԻԻՀ-ի

---

[1] Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994, հանրագիտարան, Եր., 2004, Հովհաննիսյան Ռ., Արտաքին քաղաքականությունը և մամուլը, Եր., 2004: Մանուկյան Մ., Իրանահայ գաղթօջախի առօրյան, Թեհրան, 2001: Մանուկյան Մ., Իրանի Իսլամական հեղափոխության համաշխարհային պատմական նշանակությունը, Եր., 2002: Խուրշուդյան Լ., Հայոց ազգային գաղափարախոսություն, Եր., 1999: Էսպոզիտո Ջ., Իսլամական սպառնալիք. առասպե՞լ, թե՞ իրականություն, Եր., 2003: Թադևոսյան Ռ., Իրան (տեղեկատու), Եր., 2005:

[2] Գրիգորյան Վ., «Միացյալ և Մեծ Ադրբեջան» ի հաշիվ Իրանի ու Հայաստանի, «Իրանանամէ», արևելագիտական հանդես, թիվ 4-5, (20-21), 1996, էջ 29: Իսկանդարյան Գ., Իրանի Իսլամական Հանրապետության միջուկային ծրագիրը և նրա շուրջ ծավալվող իրադարձությունները, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXV, Եր., 2006, էջ 55-65: Իսկանդարյան Գ., Հայաստան-Իրան հարաբերությունները էներգետիկայի ոլորտում, Հայաստան-Իրան. 20 տարի համագործակցության ճանապարհով, միջազգային գիտաժողովի նյութեր, 13 մարտի, 2012 թ., Եր., 2012, էջ 91-96: Փարսադանյան Վ., Հայ-իրանական գրական առնչությունների պատմությունից, Հայաստան-Իրան. 20 տարի համագործակցության ճանապարհով, միջազգային գիտաժողովի նյութեր, Եր., 2012, էջ 97-105:

[3] Daneshname-e Iranian Armani, be qushesh: Zhanet d. Lazarian, Sharhale moshahire Armani, Hirmand, Tehran, 2009. Հայ Սփյուռք հանրագիտարան, Եր., 2003, Իրանահայոց հանրագիտարան, Կազմող ժանետ Տ. Լազարյան, Եր., 2012, Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Եր., 2002:

[4] http://www.armedia.am, http://www.mfa.am/hy/foreign-policy/, http://nkr.am

[5] «Կառավարում. գործնական և տեսական», ամսագիր, թիվ 1/15/, Եր., 2003:

հարաբերություններն իր հարևան երկրների հետ: Անդրադառնալով ԻԻՀ-ի արտաքին քաղաքականության սկզբունքներին՝ նշվում է, որ դրանք ամրագրված են երկրի հիմնական օրենքով՝ Սահմանադրությամբ: Քննարկվում է ՀՀ-ԻԻՀ, նաև ԼՂՀ-ԻԻՀ սահմանի ձևավորման գործընթացը: Համակողմանի քննարկվում են ՀՀ-ԻԻՀ հարաբերություններում առկա ընդհանուր հատկանիշները, ՀՀ-ԻԻՀ հարաբերությունների հաստատման համար կարևոր նախադրյալները և երկկողմ շահերը:

1991 թ. դեկտեմբերի 25-ին ԻԻՀ-ն պաշտոնապես ճանաչեց ՀՀ-ի անկախությունը: Պայմանականորեն ներկայացված է ՀՀ-ԻԻՀ հարաբերություններն ըստ փուլերի և հարաբերությունների հաստատման գործում իրանահայ գործիչների ներդրումը: Քննարկվում է դիվանագիտական հարաբերությունների հաստատման գործընթացը, 1992 թ. փետրվարի 9-ին Թեհրանում ՀՀ-ի և ԻԻՀ-ի միջև ստորագրված լիարժեք դիվանագիտական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ հռչակագիրը, 1992 թ. մայիսի 6-8-ը ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի այցը Թեհրան:

Երկրորդ ենթագլխում՝ «Ղարաբաղյան հակամարտությունը ԻԻՀ-ի արտաքին քաղաքականության համատեքստում», ներկայացվել է ԼՂ-ի հակամարտության սկզբից ԻԻՀ-ի պաշտոնական և հասարակական-քաղաքական դիրքորոշումը, որը միանշանակ չի եղել: Այդ դիրքորոշումը լուսաբանելու համար այն պայմանականորեն տրոհվել է փուլերի: Քննարկվում է 1991 թ. նոյեմբերից 1992 թ. մայիս ամիսներին ԻԻՀ-ի ԱԳՆ-ի բարձրաստիճան պաշտոնյաների այցելություններն ու բանակցությունները Մոսկվա, Երևան, Բաքու և Ստեփանակերտ՝ հայ-ադրբեջանական հակամարտության գործում միջնորդի դեր ստանձնելու նպատակով, ինչպես նաև 1992 թ. փետրվարին ԼՂ-ի հարցի խաղաղ կարգավորման համար ԻԻՀ ԱԳ նախարար Ա. Վելայաթիի առաջարկած բանաձևը: Ներկայացված են Թեհրանում ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի, ԱՀ նախագահի պաշտոնակատար Յ. Մամեդովի և ԻԻՀ-ի նախագահ Հ. Ռաֆսանջանիի միջև եռակողմ բանակցությունները և 1992 թ. մայիսի 7-ին համատեղ հայտարարության ստորագրումը: Սակայն եռակողմ փաստաթղթում տեղ չգտավ ԼՂՀ-ի ներկայացուցչի ստորագրությունը, ավելին՝ նրա ներկայությունն անգամ չապահովվեց:

Համեմատության եզրեր են անցկացվել Լաչինի միջանցքի բացումից հետո ԻԻՀ-ի դժգոհությունների և մինչ այդ ԱՀ-ի կողմից ՀՀ-ի ու ԼՂՀ-ի նկատմամբ ոտնձգությունների միջև և հանգել ենք նրան, որ իրանական մամուլը հենվում էր ադրբեջանական աղբյուրների վրա: Սակայն ԻԻՀ-ի դիրքորոշումը որոշակի խմբագրման է ենթարկվել 1992 թ. ամռանը ԱՀ-ի հակաիրանական քաղաքականության պատճառով: Լաչին-քելբաջարյան խմբավորմանը ջախջախելուց հետո 1993 թ. ապրիլին Իսլամական համաժողով կազմակերպության շուրջ 20 երկրներ, այդ թվում՝ ԻԻՀ-ը, դատապարտեցին ՀՀ-ին: ԻԻՀ-ում կրկին մեծացավ հակահայ քարոզչության ալիքը, երբ 1993 թ. հուլիսի 23-ին հայկական զինուժը վերահսկողության տակ վերցրեց 1988-ից հակահայ գործունեության կենտրոն Աղդամ քաղաքը: Վերլուծվել է 1993-1994 թթ. ԻԻՀ-ի ոչ հայանպաստ քայլերը միջազգային ատյաններում և ռուսական կողմի հակազդումը դրանց:

Հետպատերազմյան շրջանում իրանական կողմը պահպանում էր հետաքրքրությունը ԼՂ-ի հարցում: ԻԻՀ-ն մամուլի միջոցով շարունակեց «հիշեցնել» իր միջնորդական առաքելության մասին:

Երրորդ ենթագլխում՝ «ՀՀ-ԻԻՀ դիվանագիտական փոխհարաբերություններում առաջացած խնդիրները», համակողմանի ուսումնասիրության է ենթարկվել ՀՀ-ԻԻՀ հարաբերությունների զարգացման բարդ փորձաշրջանը՝ պայմանավորված Ղարաբաղյան պատերազմով: Որպես կանոն, ԼՂ-ի հակամարտության գոտում տեղի ունեցող ցանկացած դեպք ուղղակի կամ անուղղակի արձագանքն էր ունենում ՀՀ-ԻԻՀ հարաբերություններում: Թեհրան-Երևան և Թեհրան-Բաքու կապերի զարգացման համեմատական գործընթացը ցույց է տալիս, որ այն որակապես տարբերվում էր: Եթե ԻԻՀ դեսպանության պաշտոնական բացումը Երևանում տեղի ունեցավ 1992 թ. ապրիլի 30-ին, ապա ԻԻՀ-ն չցուցաբերեց համարժեք շտապողականություն Թեհրանում ՀՀ-ի ներկայացուցչություն բացելու: Թեհրանում ՀՀ-ի դեսպանությունը պաշտոնապես բացվեց 1992 թ. դեկտեմբերի 22-ին:

1992-1994 թթ. ՀՀ-ԻԻՀ դիվանագիտական հարաբերությունները գտնվում էին հավատարմատարի մակարդակի վրա: ԼՂ-ի ճակատում հրադադարը հաստատելուց հետո առաջինը Թեհրանը որոշեց հավատարմատարի կարգավիճակը փոխարինել դեսպանի աստիճանով: Դիվանագիտական հարաբերություններում նկատվեցին որոշ խնդիրներ: Իրանական կողմը նպատակահարմար չէր գտնում ՀՀ-ին հնարավորություն տալ Թավրիզում բացելու հյուպատոսարան: Թեհրանը ձգտում էր Երևանին և Բաքվին տալ հավասարաչափ հնարավորություններ: Իրանական կողմը ձգտում էր իրանա-հայկական հարաբերությունները իրականացնել ՀՀ-ում ԻԻՀ դեսպանության միջոցով, և դա փորձում էր կարգի բերել ԻԻՀ-ում ՀՀ դեսպանությանը մի յուրահատուկ «շրջափակման» կամ դիվանագիտական մեկուսացման մատնելու ճանապարհով:

Երկկողմ հարաբերություններում կտրուկ լարվածություն նկատվեց Ղարաբաղյան պատերազմի ավարտին, երբ 1994 թ. մարտի 17-ին հայկական զինված ուժերը խփեցին Ստեփանակերտի մատույցներում հայտնված Մոսկվայից Թեհրան թռչող իրանական Ս-130 «Հերկուլես» ռազմատրանսպորտային ինքնաթիռը, որի հետևանքով 34 մարդ զոհվեց:

Չորրորդ ենթագլխում՝ «ՀՀ-ԻԻՀ միջպետական հարաբերությունների հետագա զարգացումը (1994-2005 թթ.)», ներկայացվել է ՀՀ-ԻԻՀ միջպետական հարաբերությունները ԼՂ-ում հրադադարի հաստատումից հետո: Թեհրանը հետևում էր ՀՀ-ի հարաբերություններին արևմուտքի հետ և ակնարկում ԱՄՆ պետական գործիչների հետ զրույցներում ըստ հնարավորին արժևորել ՀՀ-ԻԻՀ հարաբերությունները:

Այս ենթագլխում քննարկվում են ՀՀ-ԻԻՀ միջխորհրդարանական համագործակցությունը, միջազգային ատյաններում հայկական կողմի հավատարմությունը ՀՀ-ԻԻՀ բարեկամության սկզբունքին և այլ հարցեր: Հատուկ քննարկվում է 1995 թ. մարտի 16-ին և 1997 թ. օգոստոսի 29-ին ՀՀ-ի և ՌԴ-ի միջև կնքված պայմանագրերը, որոնցով իրավական հիմքի վրա դրվեց ՀՀ-ում ռուսական զինուժի տեղակայման հարցը, և այդ համատեքստում զուգահեռներ են անցկացվում ԻԻՀ-ի և Թուրքիայի դիրքորոշումների միջև:

1990-ական թթ. վերջերին ՀՀ-ԻԻՀ միջպետական հարաբերություններում նկատելի է դառնում հետընթացի միտումը. 1997 թ. մայիսի 31-ին հայկական կողմի նախաձեռնած ՀՀ նախագահի այցի հետաձգումը ԻԻՀ, իրանական կողմի ԱԳ նախարարների հանդիպման ձգձգումը և առաջարկը երրորդ երկրում,1998 թ. ՀՀ-ում իշխանափոխության ոչ բացահայտ հավանության արժանանալը ԻԻՀ-ում

և իրանական մամուլի ու ԻԻՀ-ում ադրբեջանական լոբբիի հերթական «քաղաքական աշխուժացումը», 1999 թ. մայիսին Վ. Օսկանյանի՝ իսրայելա-իրանական հակամարտության կարգավորման գործում ՀՀ-ի միջնորդի դեր ստանձնելու մասին հայտարարության բացասական արձագանքները Թեհրանում և այլն:

Միաժամանակ քննարկվում է երկկողմ հարաբերությունների բարելավմանը նպաստած հանգամանքները. 1999 թ. Վ. Օսկանյանի առաջարկը՝ Թեհրանում նախատեսվող «3+3» (ԻԻՀ-ՀՀ-ՌԴ + Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան) «կլոր սեղանի» ստեղծման առաջարկը և իրանական կողմի գոհունակությունն այդ հարցում, շուրջ մեկ և կես տարի ՀՀ-ում դեսպան չունենալուց հետո 2000 թ. մայիսի 11-ին ՀՀ-ում ԻԻՀ-ի նորանշանակ դեսպան Մ. Ֆ. Քոլեյնիի ժամանումը Երևան, քաղաքական զարգացումներին նոր շունչ հաղորդած 2000 թ. նոյեմբերի 7-9-ը ՀՀ ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, պաշտպանության նախարար Ս. Սարգսյանի երկօրյա այցը ԻԻՀ, ԻԻՀ-ի համար անընդունելի ԼՂ-ի հակամարտության կարգավորման համար շրջանառության մեջ դրված և հայկական կողմից մերժված տարածքային փոխանակումները, փոխարենը իրանական կողմից առաջ քաշված տնտեսական բնույթի փաթեթը, որն առնչվում էր Մեղրիի հետ:

2001 թ. սեպտեմբերի 11-ին նյույորքյան ահաբեկչությունը նոր վիճակ մտցրեց միջազգային հարաբերություններում: Աշխարհաքաղաքական այդ նոր իրադրության պայմաններում քննարկվում է 2001 թ. դեկտեմբերի 25-27-ը ՀՀ նախագահի պաշտոնական այցը ԻԻՀ, 2004 թ. սեպտեմբերի 8-9-ը ԻԻՀ նախագահ Մ. Խաթամիի առաջին այցը ՀՀ:

Ատենախոսության երկրորդ գլուխը վերնագրված է «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» և կազմված է 4 ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ «ՀՀ-ԻԻՀ միջպետական տնտեսական համագործակցության սկզբնավորումը», քննարկվում է շրջափակված ՀՀ-ի համար ԻԻՀ-ի հետ առևտրատնտեսական հարաբերությունների սկզբնավորման հարցը: Ներկայացվում է նաև Իրանի հայ համայնքի՝ աշխարհիկ և կրոնական կառույցների նվիրատվությունները՝ ալյուրի, բենզինի և առաջին անհրաժեշտության այլ ապրանքների առաքումը հայրենիք: Փաստվում է, որ ԼՂ-ի պատերազմի տարիներին ՀՀ-ն առևտուր անելու փորձ ձեռք բերեց ՌԴ-ի և Թուրքմենստանի հետ՝ Կասպից ծովի իրանական էնզելի նավահանգստի միջոցով:

Միաժամանակ քննարկվում է այն մտահոգիչ երևույթները, որոնք տեղ են գտել ՀՀ-ԻԻՀ տնտեսական հարաբերություններում: Մատնանշվում է, որ երկկողմ տնտեսական համագործակցությունը համակարգելու գործում իր ուրույն դերն ունեցավ 1992 թ. նոյեմբերին ՀՀ նախագահի հրամանագրով ստեղծված հայ-իրանական կապերի կոորդինացման (համաձայնեցման) պետական հանձնաժողովը:

Երկրորդ ենթագլխում՝ «Տնտեսական զարգացումը և էներգետիկ համագործակցությունը», քննարկվում է էներգետիկ գործակցության ձևավորման գործընթացը: Հատուկ քննարկվում է «Իրան-Հայաստան գազամուղ» ծրագիրը, որի նպատակն է ՀՀ-ի գազի այլընտրանքային մատակարարման ստեղծումը: Ցույց է տրվում, որ այս նախագիծը միշտ գտնվել է կողմերի ուշադրության ներքո, սակայն տարբեր պատճառներով՝ քաղաքական, ֆինանսական, ձգձգվել է և միայն 2000-ական թթ. սկզբին հարցը մտավ գործնական փուլ: Փաստվում է

էլեկտրաէներգիայի ոլորտում գործակցությունը. 1998-2002 թթ. կտրվածքով ՀՀ-ից ԻԻՀ և հակառակ ուղղությամբ հաղորդվել է ավելի քան 1,3 մլրդ կվտժ էլեկտրաէներգիա: Այս ենթագլխում քննարկվում է ՀՀ-ից մետաղների արտահանման, բեռների փոխադրման, սահմանամերձ առևտրի, տնտեսական կապերում առաջացած խնդիրների մասին, ինչպես նաև տնտեսական գործակցությունը խորացնելու նպատակով 1996 թ. դեկտեմբերի 25-29-ը ԻԻՀ-ի փոխնախագահ Հ. Հաբիբիի այցը ՀՀ: 1990-ական թթ. վերջերին կողմերը նոր կապեր հաստատեցին գյուղատնտեսության և միջմարզային ոլորտներում: 1998 թ. հուլիսի 20-ին տնտեսական համագործակցության պայմանագրով Իրանի Զարգացման բանկը ՀՀ-ին հատկացնում էր 5 մլն դոլարի վարկ:

Երրորդ ենթագլխում՝ «Իրանական կապուղիները որպես ՀՀ տնտեսական զարգացման այլընտրանքային տարբերակ», քննարկվում է ՀՀ-ի համար արտաքին աշխարհի հետ կայուն և հուսալի հաղորդակցական կապ հաստատելու միջոցի՝ երկաթգծի կառուցման խիստ արդիական հարցը: Հանգամանորեն քննարկվում են ՀՀ-ն և ԻԻՀ-ն իրար կապող Մեղրիի ժամանակավոր պոնտոնային կամուրջի և հիմնական կամուրջի կառուցման վերաբերյալ հարցերը: Արխիվային նորահայտ փաստաթղթերի հիման վրա վերլուծվում են հիմնական կամուրջի կառուցման աշխատանքները, որոնք ձգձգվեցին և տևեցին մի քանի տարի՝ իրանական կողմի պատճառով: Հիմնական կամուրջը պաշտոնապես բացվեց 1996 թ. հունվարի 9-ին, որը նպաստեց առևտրաշրջանառության կտրուկ մեծացմանը: Համեմատելով դրան հաջորդած տարիների ցուցանիշները մինչև 2011 թ., փաստվում է, որ 1996 թ. առևտրաշրջանառությունը՝ 193 մլն դոլար, մնաց առավելագույնը:

Չորրորդ ենթագլխում՝ «ԻԻՀ-ի նախաձեռնած տնտեսական բազմակողմ համագործակցությունը 1990-ական թթ. 2-րդ կեսին», քննարկվում է 1990-ական թթ. 2-րդ կեսին Թեհրանի մշակած տնտեսական բազմակողմ համագործակցությունը՝ որպես տարածաշրջանային քաղաքականություն: ՀՀ-ԻԻՀ-Թուրքմենստան, ՀՀ-ԻԻՀ-Հունաստան եռակողմ և ԻԻՀ-ՀՀ-Վրաստան-Բուլղարիա քառակողմ համագործակցությունների ձևավորման համար կային փոխադարձ շահեր: Սակայն բարձրաստիճան պաշտոնյաների հանդիպումներն ու քննարկումներն արդյունքներ չունեցան: Խարդավանքներին և սպառնալիքներին լավագույնս տիրապետող Հ. Ալիևի՝ ՀՀ-ին մեկուսացնելու քաղաքականությունը պսակվեց հաջողությամբ: Նրա անմիջական սպառնալիքի ազդեցությամբ հաջողվեց կանխել Վրաստանի մասնակցությունը համագործակցությանը և բացառել տնտեսական բազմակողմ համագործակցության ձևավորումը տարածաշրջանում: Մյուս կողմից՝ ՀՀ-ԻԻՀ-Թուրքմենստան բազմակողմ համագործակցության հանդեպ շահագրգռված չէր ՌԴ-ը, քանզի դա չէր բխում նրա էներգետիկ շահերից:

Ատենախոսության երրորդ գլուխը վերնագրված է «ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ»: ՀՀ-ԻԻՀ միջմշակութային համագործակցությունը, սկզբնավորվելով 1990-ական թթ., աստիճանաբար կարողացել է իր մեջ ներառել ոլորտի տարբեր ճյուղեր: Գիտակրթական և մշակութային համագործակցությունը պարբերաբար եղել է նաև երկու երկրների նախագահների ուշադրության կենտրոնում, այսինքն՝ չի սահմանափակվել լոկ համապատասխան պաշտոնյաների հանդիպումներով և հարցերի քննարկումով: Ավելին, համագործակցությունը, ունենալով երկկողմ պետական շահագրգռություն, կարևորվեց նախագահների փոխայցերով, որոնց ընթացքում

քաղաքական և տնտեսական հարցերին զուգընթաց օրակարգային դարձավ նաև գիտակրթական և մշակութային համագործակցության ամրապնդման և զարգացման ծրագրերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ բաժնում ամփոփվում են ատենախոսության հիմնական արդյունքները, կատարվում եզրահանգումներ.

1. ՀՀ-ԻԻՀ հարաբերությունների պատմության վերլուծությունը ցույց է տալիս, որ անկախ քաղաքական իշխանությունների միմյանց հաջորդելուն և փոփոխություններին, ԻԻՀ-ՀՀ հարաբերությունների պահպանումը, զարգացումն ու խորացումը կարևոր նշանակություն ունեն երկու պետությունների համար:

2. Շրջափակված ՀՀ-ի համար ԻԻՀ-ը շարունակում է մնալ վստահելի սահմանակից հարևան և տնտեսական գործընկեր: Հեռանկարում ավելի շոշափելի են լինելու ՀՀ-ԻԻՀ հարաբերությունների արդյունքները:

3 Հետխորհրդային տարիներին, այսօր և ապագայում ԻԻՀ-ը կարևորել ու կարևորելու է ՀՀ-ի կայունությունը և անվտանգությունը: Թեհրանն աչալրջորեն հետևում է ՀՀ-ի ներքաղաքական զարգացումներին և այն ընկալում որպես տարածաշրջանային անվտանգության պահպանման բաղկացուցիչ մաս:

4. Սահմանակից ԼՂ-ի հակամարտության խաղաղ կարգավորման իրանական միջնորդական առաքելության ձախողումը բխում էր ՌԴ-ի, ԱՄՆ-ի, Թուրքիայի և ԵՄ-ի շահերից: Սա այն եզակի դեպքերից է, երբ նշված պետությունների շահերը լիովին համընկնում էին:

5. 1992 թ. փետրվար-մարտ ամիսներին իրանական մաքոքային դիվանագիտության հաջողություն կարելի է համարել հակամարտող կողմերի միջև հաստատված փխրուն, սակայն տվյալ պահին կենսական նշանակություն ունեցող հրադադարները:

6. Համակողմանի քննության ենթարկելով ԼՂ-ի հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացում ԻԻՀ-ի միջնորդական առաքելությունը՝ եկել ենք այն եզրահանգման, որ չնայած հայկական կողմի բազմաթիվ հորդորներին, Թեհրանը սկզբնապես երկրորդական է համարել ԼՂ-ի կարգավիճակը քննարկելը:

7. Ե՛վ քաղաքական, և՛ տնտեսական, և՛ մշակութային կապերով ԻԻՀ-ը ագուցված է ԱՀ-ին: Թեհրանը շահագրգռված է և կաշկանդված Բաքվի հետ կապերի պահպանմամբ ու խորացմամբ, քանի որ ԱՀ-ն, լինելով ԻԻՀ-ից հետո աշխարհում շիա դավանանքի երկրորդ պետությունը, ԻԻՀ-ի համար տարածաշրջանում կարևոր հարևան է: ԱՀ-ի արևմտամետ և թուրքամետ քաղաքականությունը «ներվում» է Բաքվին՝ հաշվի առնելով երկու պետությունների հոգևոր-մշակութային կապվածությունը:

8. ՀՀ-ԻԻՀ հարաբերություններում պետք է նկատի ունենալ հետևյալ հանգամանքը. ԱՀ-ում իսլամական և իրանամետ հոսանքների իշխանության գալու դեպքում, Թեհրանը կպաշտպանի ԱՀ-ին, այդ թվում՝ ՀՀ-ի համար կենսական նշանակություն ունեցող ԼՂ-ի հակամարտության կարգավորման հարցում:

9. ՀՀ-ԻԻՀ տնտեսական համագործակցության կայուն և շարունակական զարգացումն արդիական և հրամայական նշանակություն ունի: Հեռանկարային են համագործակցությունը հեռահաղորդակցության, ՀՀ-ի մարզերի և ԻԻՀ-ի նահանգների միջև, էներգետիկայի և այլ ոլորտներում:

10. ԻԻՀ-ՀՀ համագործակցության մեջ պետք է մշտապես ներառել բազմաթիվ գործառույթներ ապահովող Իրանի հայ համայնքին:

11. 1992 թ. դեկտեմբերի 22-25-ը ՀՀ փոխնախագահ Գ. Հարությունյանին հաջողվեց ԻԻՀ-ի ղեկավարության հետ բանակցությունների շնորհիվ իրանական կողմին հավաստել հայերի բարի կամքը և ցրել նրա մտավախությունները: Դա հայկական կողմի դիվանագիտական հաջողությունն էր, որի հետևանքով ստորագրվեցին մի շարք տնտեսական պայմանագրեր:
12. ԻԻՀ-ն և ՀՀ-ն նոր ծրագրեր իրականացնելու համար պետք է համախմբեն իրենց հնարավորությունները: Փորձը ցույց է տվել, որ դրանց արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է միաժամանակ չձեռնարկել մի քանի մեծամասշտաբ նախագծեր, քանի որ դրանք գործնականում դժվար է իրականացնել ֆինանսական և այլ պատճառներով: Որևիցե նոր նախագծի քննարկումները պետք է սկսել միայն ընթացիկ, մեծ ռեսուրսներ պահանջող գործի լիարժեք և վերջնական կատարումից հետո:
13. ԻԻՀ-ի և ՀՀ-ի առևտրաշրջանառության ցածր մակարդակը պայմանավորված էր նաև այդ երկրի տնտեսական փակ համակարգով զարգանալու հանգամանքով և հեռահաղորդակցության նպաստավոր հնարավորությունների բացակայությամբ: Դա հիմք է տալիս գալ այն եզրահանգման, որ ԻԻՀ-ՀՀ տնտեսական համագործակցությունը չի զարգացել դրական դինամիկայով: Այստեղ եղել են ակնհայտ ելևէջումներ, երբ իրանական ապրանքները կամ ողողել են ՀՀ շուկան կամ էլ ՀՀ տնտեսության զարգացման ու այլ երկրներից ներմուծումների մեծացման պատճառով, դուրս մղվել այնտեղից: Ակնհայտ է, որ ներկայումս ԻԻՀ-ի հետ հարաբերությունների կառուցման համար լավ հիմք կարող է դառնալ էներգետիկ բնագավառը:
14. 2008 թ. օգոստոսին վրաց-օսական հնգօրյա պատերազմը հերթական անգամ փաստեց ՀՀ-ի խոցելիությունը, որն իր համար ռազմավարական նշանակության ապրանքներ ներմուծում էր հիմնականում Վրաստանի տարածքով: Փաստորեն կրկին կարևորվեցին այլընտրանքային կապուղիների զարգացման և էներգակիրներով հարուստ ԻԻՀ-ից նավթի ու բենզինի ներկրման հարցերը:
15. Տարաբնույթ սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների համեմատական վերլուծությունը բերել է այն եզրահանգման, որ ՀՀ-ԻԻՀ հարաբերությունների ձևավորման և զարգացման ընթացքում առաջացած որոշ խնդիրներ կապված են ԱՀ-ի նկատմամբ ԻԻՀ-ի նպատակային քաղաքականության հետ:
16. 2000-ական թթ. սկզբին ԻԻՀ-ը իրականացրած ներդրումային նոր քաղաքականության շնորհիվ իրանական կողմն իր մասնաբաժնով չեզոքացրել է տարածքային հնարավոր փոփոխությունների՝ Մեղրին ԼՂ-ի դիմաց Փ. Գոբլի ծրագիրը:
17. ՀՀ-ԻԻՀ սահմանակից պետությունների ռազմաքաղաքական ընդհանուր շահերը տարածաշրջանում հնարավորություն են տալիս երկկողմ արդյունավետ և փոխշահավետ միջպետական հարաբերություններ հաստատել ու զարգացնել: ՀՀ-ն, չլինելով ՆԱՏՕ-ի և հակառակը՝ լինելով ԱՊՀ անդամ պետություն, ԻԻՀ-ի կողմից ընդունվում է որպես առավել վստահելի գործընկեր և հույսեր ներշնչում Թեհրանին հատկապես ՌԴ-ի հետ հարաբերությունները խորացնելու առումով:
18. 1990-ական թթ. սկզբներին հայկական կողմի ցուցաբերած անտարբերության հետևանքով նորանկախ երկրի տնտեսությունը անդառնալի կորուստներ ունեցավ: Անհագ կողոպուտի պատճառով ներկրված ապրանքների գների արհեստական բարձրացումը և իրական արժեքից մի քանի անգամ ցածր գնով հաստոցների ու սարքավորումների, պղնձի և մոլիբդենի խտանյութի անօրեն

վաճառքը, ապրանքի կշիռները չնշելը և այլ բացասական երևույթներ երկիրը թալանելու աննախադեպ օրինակներ էին:

19. 1994 թ. սկզբին ՀՀ-ի դեսպանությունը տնտեսական բնույթի բազմաթիվ առաջարկություններ էր ստանում անհատներից: Առաջարկում էին հագուստեղեն, սննդամթերք՝ ՀՀ-ում արտադրվող ապրանքների դիմաց: Փաստորեն Թեհրանը խուսափելով պետական առաջարկից՝ ձգտում էր քաղաքական հարցադրումներից զերծ մնալ: Ռազմավարական նշանակություն ունեցող ապրանքների (վառելանյութ, հացահատիկ) վերաբերյալ առաջարկները հասցեագրվում էին հայ-իրանական կապերի հանձնախմբին: Տնտեսական բնույթի առաջարկները ՀՀ դեսպանությունը վերահասցեագրում էր Թեհրանում գործող Իրան-Հայաստան առարդպալատ:

20. Համագործակցության նման ճկուն, գաղտնի, հնարավորինս անսխալ գործելաոճով ԻԻՀ-ն խուսափում էր ԱՀ-ի կողմից սանձազերծած հակաիրանական (մասամբ նաև հակահայկական) քարոզչական հնարավոր հեղեղից:

21. ՀՀ կառավարությունը ԻԻՀ-ի հետ հարաբերություններում հաշվի չէր առնում ԱՀ-ի կարևորությունը, բայց փոխարենը չէր կարող լիովին անտեսել օրինակ ԱՄՆ-ի և ՌԴ-ի շահերը: Երևանում հայ-իրանական կապերի համաձայնեցման հանձնաժողովի նիստերին մասնակցում էին ԻԻՀ-ի դեսպանության ներկայացուցիչները: ՀՀ-ն երաշխավորում էր ԻԻՀ-ի հետ հարաբերությունների կայունությունն ու հուսալիությունը: Մինչդեռ ԻԻՀ-ը կաշկանդված էր բացահայտորեն ներկայացնել ԻԻՀ-ՀՀ հարաբերությունները միջազգային ատյաններում:

22. ՀՀ-ԻԻՀ երկաթգծի հարցը դրական լուծում չունեցավ ֆինանսական և քաղաքական պատճառներով: Միայն տարիներ անց ՀՀ-ի ղեկավարությունն իր նպատակը համարեց երկաթգծի կառուցումը: Այդ մասին է վկայում 2009 թ. ապրիլի 13-14-ը ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի այցը ԻԻՀ, որտեղ, ի թիվս այլ պայմանագրերի, առանձնանում է Իրան-Հայաստան երկաթուղագծի կառուցման պայմանագիրը: Այս ծրագրի իրականացմամբ ՀՀ-ն հնարավորություն կստանա մուտք գործել Պարսից ծոցի ավազան, Հարավարևելյան Ասիայի երկրներ՝ բացառելով շրջափակումը: ԻԻՀ-ն, իր հերթին կկապվի Սև ծովի ավազանի երկրների հետ: Երկաթուղու կառուցումով կմեծանա ՀՀ-ի կշիռը ԻԻՀ-ի համար: Սակայն համաշխարհային տնտեսական ճգնաժամը խոչընդոտեց այդ ծրագրի իրականացմանը:

23. Թեհրանի նախաձեռնած տնտեսական բազմակողմ համագործակցությունը բխում էր ՀՀ-ի տնտեսական շահերից, հույսեր ներշնչում դուրս գալու մեկուսացումից և վարելու ակտիվ տնտեսական քաղաքականություն՝ հայտնվելով Ասիա-Եվրոպա առևտրական խաչմերուկում: ՀՀ-ԻԻՀ-Թուրքմենստան, ՀՀ-ԻԻՀ-Հունաստան եռակողմ և ԻԻՀ-ՀՀ-Վրաստան-Բուլղարիա քառակողմ համագործակցությունների ձևավորման համար կային փոխադարձ շահեր: Սակայն բարձրաստիճան պաշտոնյաների հանդիպումներն ու քննարկումներն արդյունք չունեցան: Խարդավանքներին և սպառնալիքներին լավագույնս տիրապետող Հ. Ալիևի՝ ՀՀ-ին մեկուսացնելու քաղաքականությունը պսակվեց հաջողությամբ: Նրա ջանքերով հաջողվեց կանխել Վրաստանի մասնակցությունը համագործակցությանը և բացառել տնտեսական բազմակողմ համագործակցության ձևավորումը տարածաշրջանում: Մյուս կողմից՝ ՀՀ-ԻԻՀ-Թուրքմենստան բազմակողմ համագործակցության հանդեպ շահագրգռված չէր

ՌԴ-ը, քանզի դա չէր բխում նրա էներգետիկ շահերից: Այդ ամենի հետևանքով գազամուղի կառուցումը ձգձվեց, իսկ հետագայում Իրան-Հայաստան գազամուղի կառուցմամբ ՀՀ-ն հնարավորություն չունեցավ օգտվել գազից:

24. 1998-2000 թթ. Թեհրան-Երևան կապերի հետընթացի միտումը նշմարելի էր մինչ այդ: Հայկական կողմին պակասում էր քաղաքական հեռատեսությունն ԻԻՀ-ի տարածաշրջանային քաղաքականության ձևավորման և կիրառման հարցում: Իր հերթին ԻԻՀ-ի քաղաքականությունը ՀՀ-ի հանդեպ որոշ չափով կրում էր այդ երկրի իշխող վերանախավի, դրա տարբեր քաղաքական հոսանքների, դիրքորոշումների (որոշ դեպքերում թուրքամետ) և իսլամադավան պետությունների հետ ԻԻՀ-ի ունեցած փոխհարաբերությունների, իսլամական քաղաքական-տնտեսական բնույթի կազմակերպություններում ունեցած կշռի, զբաղեցրած տեղի ու ստանձնած դերի ազդեցությունները:

25. 1990-ական թթ. կեսերից համեմատաբար նվազեց ԻԻՀ-ի ազդեցությունը տարածաշրջանում, որն առավել սուր դրսևորվեց արդեն 1999-2000 թթ., երբ ԱՄՆ-ի կողմից առաջ քաշվեց Փ. Գոբլի ծրագիրը, որը ենթադրում էր ՀՀ և ԱՀ-ի միջև տարածքների փոխանակում՝ Մեղրիի փոխարեն ԼՂ-ն ՀՀ-ին հանձնելու տարբերակը, որը մերժվեց ՀՀ-ի կողմից, քանզի այդ կերպ ՀՀ-ն զրկվում էր ԻԻՀ-ի հետ ցամաքային կապից: ԻԻՀ-ն ևս բացասաբար վերաբերվեց այդ ծրագրին իր հյուսիսարևմտյան սահմանի հնարավոր փոփոխման համար: Այդ է պատճառը, որ 2000-2005 թթ. իրանական կողմը շտապ կարգով սկսեց աշխուժացնել տնտեսական համագործակցությունը ՀՀ-ի հետ, հանդես եկավ վաղուց կնքված պայմանագրերը իրականություն դարձնելու մի շարք ծրագերով: Փաստորեն Թեհրանը կրկին զարկ տվեց 1990-ական թթ. սկզբին քննարկվող ծրագրերին և աստիճանաբար կյանքի կոչեց դրանք:

26. ՀՀ-ԻԻՀ համագործակցությունն ունի մեծ հնարավորություններ գիտական, կրթական և հոգևոր-մշակութային ոլորտներում: Սրանք միջպետական հարաբերությունների այն անքակտելի մասն են, որոնք ունեն նորովի զարգացման միտումներ:

27. ՀՀ-ԻԻՀ միջմշակութային հարաբերությունները պետք է դիտարկել որպես միջքաղաքակրթական՝ քրիստոնեության և իսլամի խաղաղ գոյակցության կեցութաձև: Ըստ էության այն իր խորքում պարունակում է հայ ազգային քրիստոնեական արժեհամակարգի բարիդրացիությունն իսլամի շիա կրոնական ուղղությունը պետական գաղափարախոսություն և աշխարհայացք հռչակած աստվածապետական ԻԻՀ-ի հետ:

28.Միջքաղաքակրթական-միջմշակութային համագործակցության շրջանակներում ակնհայտ է ԻԻՀ-ի հայ համայնքի որպես կամուրջի, կապող օղակի նշանակությունը և անմիջական մասնակցությունն ամենտարբեր նախաձեռնություններում: Հաճախ իրանական մշակույթը ՀՀ-ում ներկայացնելիս իրանահայերն են կատարում գլխավոր դերը: Մինչդեռ իրանցի արվեստագետները հատկապես արվեստի, կինոյի ոլորտում համեստ են ներգրավված: Մյուս կողմից նշելի է, որ հենց նույն միջպետական հարաբերությունների մակարդակով աշխուժորեն ներգրավված իրանահայ մտավորականությանը նպաստավոր հնարավորություն է ընձեռված իր գործունեությունը ծավալել նաև հայրենիքում, անմիջական կապեր հաստատել մշակույթի, գիտության, արվեստի հայաստանաբնակ գործիչների հետ, կատարել փորձի փոխանակում:

Հավելվածում երկու աղյուսակներով ներկայացված են ՀՀ-ԻԻՀ առևտրի ծավալները և ՀՀ տնտեսության իրական հատվածում ԻԻՀ-ի կողմից կատարված ներդրումների ծավալը:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Իրանի դիրքորոշումը Լեռնային Ղարաբաղի հարցում 1990-ական թթ., «Հայ աստվածաբան», Գիտական հոդվածների ժողովածու, Գ, Երևան, 2009, էջ 241-250:
2. Հայ-իրանական քաղաքական հարաբերությունները 1990-ական թթ., Երևանի պետական համալսարան, Պատմության ֆակուլտետ, «Տարեգիրք» Բ, Պատմագիտական հանդես, Երևան, 2010, էջ 162-174:
3. Նոր փաստեր Հայաստան-Իրան հիմնական կամրջի կառուցման մասին, Կանթեղ, գիտական հոդվածներ, 2(47), Երևան, 2011, էջ 157-160:
4. Հայ-իրանական առևտրատնտեսական հարաբերութ-յունները 1991-1995 թթ., «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Ա, Երևան, 2011, էջ 242-248:
5. ՀՀ-ԻԻՀ-ԹՈՒՐՔՄԵՆՍՏԱՆ եռակողմ տնտեսական համագործակցության ձևավորումը, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես (Գիտական հոդվածների ժողովածու), Բ, Երևան, 2011, էջ 156-164:
6. Ղարաբաղյան հակամարտության արձագանքները իրանական մամուլում (1992-1994 թթ.), «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես (Գիտական հոդվածների ժողովածու), Գ, Երևան, 2012, էջ 187-194:
7. Հայ-իրանական գիտակրթական և մշակութային համագործակցությունը 1992-2005 թթ., Բանբեր Երևանի համալսարանի, հասարակական գիտություններ, Միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն, 136.6, Երևան, 2012, էջ 35-47:
8. ՀՀ-ԻԻՀ համագործակցությունը Թեհրանի տնտեսական բազմակողմ գործունեության համատեքստում 1990-ական թթ. 2-րդ կեսին, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես (Գիտական հոդվածների ժողովածու), Բ, Երևան, 2013, էջ 209-222:

МКРТЧЯН КАРЕН ГУРГЕНОВИЧ

АРМЯНО-ИРАНСКИЕ ОТНОШЕНИЕ В 1991-2005 ГГ.

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01 “История Армении”

Защита состоится 4-го июля 2014 г., в 14^{00}, на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории НАН РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4)

РЕЗЮМЕ

Диссертация состоит из введения, трех глав, которые в свою очередь делятся на 9 заголовок, эпилога, списка использованных источников и литературы, приложения. Во введении обоснована актуальность темы и научные инновации, представлены основные цели и задачи, а так же хронологические рамки темы, сделан краткий обзор использованных источников и литературы.

Первая глава, «Политические отношения», делится на четыре заголовки. Кратко представляются отношения Исламской Республики Иран с соседними странами. Анализируется процесс формирования межгосударственной границы между ИРИ и Республикой Армении, ИРИ и Нагорно-Карабахской Республикой, а также общие черты между Арменией и Исламской Республикой Иран, важные предпосылки и взаимные интересы для основания отношений РА с ИРИ. Условно представлено поэтапное развитие отношений РА и ИРИ и политический вклад в формирование этих отношений деятелей армянской общины Ирана. Рассматривается процесс установления дипломатических отношений. Представлены позиции официальных и общественных кругов Ирана к нагорно-карабахскому конфликту со времени его возникновения, которые не были однозначными. Для освещения этой позиции оно условно делится на этапы. Обсуждаются визиты и переговоры высокопоставленных лиц ИРИ в Москву, Ереван, Баку и Степанакерт с ноября 1991 года до мая 1992 года, целью которых было взять на себя роль посредника в армяно-азербайджанском конфликте.

Проанализированы неблагоприятные для армян шаги ИРИ в международных форумах в 1993-1994 годах и противодействие на них с российской стороны. В послевоенный период иранская сторона сохранила интерес в нагорно-карабахском вопросе. Иран продолжал “напоминать” о своей посреднической миссии на страницах прессы.

Проведено комплексное изучение сложного испытательного периода развития отношений между ИРИ и РА, обусловленного нагорно-карабахской войной.

Также представлено межпарламентское сотрудничество между ИРИ и РА, показана верность армянской стороны в соблюдении принципа дружбы с Ираном на международной арене. Отдельно обсуждается подписанные в 16 марта 1995 года и 29 августа 1997 года договоры между Арменией и Российской Федерацией, благодаря которым была заложена правовая основа для развертывания

российских военных баз в Армении, и в этом контексте были проведены параллели между позиций Ирана и Турции.

Вторая глава диссертации называется “Экономические отношения” и состоит из 4 заголовок. Обсуждается вопрос возникновения экономических отношений между ИРИ и находившейся в блокаде Армениеяй. Показывается, что в годы нагорно-карабахской войны Армения преобрела опыт в торговле с Россией и Туркменистаном через иранский порт Энзели на Каспийском море. Одновременно обсуждаются те тревожные явления, которые имели место в ирано-армянских экономических отношениях.

Особое внимание уделено проекту газопровода “Иран-Армения”, целью которого являлось появление альтернативного источника природного газа для Армении. Указывается на потенциал развития отношений в секторе электроэнергетики: в период 1998-2002 годов в каждом направлении было передано более чем 1,3 млрд кВтч электроэнергии. Также обсуждается экспорт металлов, грузовые перевозки из Армении, приграничная торговля, возникшие проблемы экономических связей.

Изучен весьма актуальный вопрос строительства железной дороги, который предназначен для стабилизации коммуникаций Армении с внешным миром. Тщательно исследован вопрос строителства временного понтонного моста в Мегри, который связывает Армению и Иран, а также разработанный Тегераном во второй половине 1990-ых годов проект многостороннего экономического сотрудничества, как основы для формировании региональной политики.

Третья глава диссертации называется “Научное и культурное Сотрудничество”. Межкултурное сотрудничество ИРИ и РА, возникшее в начале 1990-ых годов, постепенно включало в себя разнообразные ветви данной отрасли. Научное и культурное сотрудничество постоянно находилось в центре внимания президентов двух стран, то есть дело не ограничивалось только встречами и обсуждениями соответствующих должностных лиц. Более того, сотрудничество, имея взаимный политический интерес, было подчеркнуто взаимными визитами президентов, во время которых кроме политических и экономических вопросов на повестку дня была поставлена и программа развития научно-образовательного и культурного сотрудничества.

В эпилоге подведены итоги проведенной работы и изложены основные выводы исследования:

В приложении в двух таблицах представлены объем торговли между Ираном и Арменией и инвестиции Ирана в реальный сектор экономики Армении.

MKRTCHYAN KAREN GURGEN

THE ARMENIAN-IRANIAN RELATIONS FROM 1991 TO 2005

Dissertation for the degree of the Doctor of History on the specialization of "History of Armenia" 07.00.01.

The defense of the dissertation will be held on July 4, 2014, 14^{00} at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Ave 24/4).

SUMMARY

The presentation consists of the following parts: introduction, three chapters, which are divided into 9 subchapters, conclusion, reference list, and appendix. The introduction part presents the actuality of the topic and the scientific news, the main goals and issues, the chronological selection of the topic, and the brief theory of the referred sources and literature.

The first chapter 'Political Relations' is divided into four subsections. It briefly presents the relations of the Islamic Republic of Iran with its neighboring countries. It also discusses the process of the formation of the border between the Republic of Armenia and the Islamic Republic of Iran, and the border between the Republic of Mountainous Kharabagh and the Islamic Republic of Iran. The section also describes the common features present in the relations between the Republic of Armenia and the Islamic Republic of Iran, the important basics for the establishment of these relations, and the mutual interests. The investment of the Iranian-Armenian figures in the establishment of the above mentioned relations is also presented. The chapter discusses the process of the foundation of diplomatic relations. It presents the orientation of the Islamic Republic of Iran, which was not definite, from the beginning of the struggle of the Republic of Mountainous Karabagh. To illustrate this orientation, the chapter was divided into stages. It discusses the visits and negotiations of the state officials of the Ministry of Foreign Affairs of the Islamic Republic of Iran in Moscow, Yerevan, Baku, and Stepanakert from November 1991 to May 1992, with the aim of taking on the role of the mediator in the Armenian-Azeri battle.

There is the analysis of the non-beneficial for Armenians steps undertaken by the Islamic Republic of Iran in international stances and the counter-effect of the Russian side. During the after-war period, the Iranian side continued being interested in the issue of Nagorno Karabagh. The Islamic Republic of Iran continued to 'remind' about its mediator's mission through press media.

This study thoroughly investigates the hard experience of the development of the relations between the Republic of Armenia and the Islamic Republic of Iran, which was conditioned by the Kharabagh war.

It also presents the cooperation between the assemblies of the Republic of Armenia and the Islamic Republic of Iran, the loyalty of the Armenian side towards these relations and other issues. There is a special focus on the agreements signed on March 16, 1995, and August, 29, 1997, between the Republic of Armenia and

Russian Federation, due to which the issue of locating the Russian military forces in the Republic of Armenia was placed on legal basis. In this context, the study draws parallels between the orientation of the Islamic Republic of Iran and that of Turkey.

The second section of the presentation is titled 'Economic Relations' and comprises four subsections. It discusses the issue of the establishment of economic relations between the blockaded Republic of Armenia and the Islamic Republic of Iran. It brings evidence that during the Karabagh war, the Republic of Armenia gained experience in trading with the Russian Federation and Turkmenistan through the Iranian Enzel port of the Caspian Sea. Meanwhile, this section discusses those concerns which took place in the economic relations between the Republic of Armenia and the Islamic Republic of Iran.

There is a special emphasis on the discussion of the program 'Iran-Armenia Gas Supply', whose aim is the alternative supply of gas to the Republic of Armenia. There is the evidence of the activities in the electricity sector; during the 1998-2002 period there was transmitted more than 1.3 billion kilowatt/hour of electrical power in each direction. Also, the issue of electricity is evidenced, and the issues of the metal export from the Republic of Armenia, the shipping, the frontier trade, and other economic issues are discussed.

This section presents the quite actual issue of the railway construction for the establishment of the reliable communication with the outer world. There is also a detailed discussion about the temporary pontoon bridge in Meghri which connects the Republic of Armenia and the Islamic Republic of Iran, as well as the construction of the main bridge. Besides, the section focuses on the economic cooperation, as a formation of the regional policy, worked out by Tehran in the mid-1990s.

The third section of the presentation is named 'Scientific-Educational and Cultural Cooperation'. The cultural cooperation between the Republic of Armenia and the Islamic Republic of Iran was founded in the 1990s and was able to involve various spheres of culture. Scientific-educational and cultural cooperation have always been the center of the both countries' presidents' attention. This cooperation was not limited to the meetings of certain officials and the discussion of certain issues. Moreover, this cooperation, representing mutual interests, was given importance by the presidents' visits, during which along with political and economic issues, they also discussed programs for the development of scientific-educational and cultural cooperation.

The main findings and results of the study are summarized in the conclusion.

The appendix presents the volume of the trade between the Republic of Armenia and the Islamic Republic of Iran, and the volume of the investments made by Iran in the economy of Armenia.